ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱՆԴՐԱՆԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ ԱԱԾ տնօրենի տեղակալ, գնդապետ,
ՀՀ կառավարման ակադեմիայի հայցորդ

VAHE YENGIBARYAN
Doctor of Legal Sciences, Professor
ANDRANIK SIMONYAN
Deputy Director of NSS of the RA,Colonel
PhD in Academy of Governence of the RA

ВАГЕ ЕНГИБАРЯН
Доктор юридических наук, профессор
АНДРАНИК СИМОНЯН
Заместитель начальника СНБ РА, полковник,
соискатель Академии управления РА

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

SOME ISSUES OF JUDICIAL SUPERVISION OF PRE-TRIAL INVESTIGATION IN THE CONTEXT OF FEATURES OF INTELLIGENCE AND TRACKING ACTIVITY

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ СУДЕБНОГО КОНТРОЛЯ НАД ДОСУДЕБНОГО ПРОИЗВОДСТВА В КОНТЕКСТЕ ОСОБЕННОСТЕЙ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների (այսուհետ՝ ՕՀՄ-ների) իրականացման երաշխիքների ու պայմանների իրավական հիմքերը նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերով, ինչպես նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ ՕՀԳ օրենք): Այդուհանդերձ, ՕՀՄ-ների իրականացման երաշխիքների ու պայմանների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դրանք դիտարկել օպերատիվ-հետախու-

զական գործունեության (այսուհետ՝ ՕՀԳ) նպատակների ու խնդիրների, ինչպես նաև սկզբունքների համատեքստում, որոնք պայմանավորում են ընդհանուր առմամբ ՕՀՄ-ների իրականացման իրավաչափության թույլատրելի սահմանները:

Այսպես, ՕՀԳ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը հակահրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով՝ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումն է»:*

Նույն օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է ՕՀԳ-ի նպատակները, որոնց շարքում ՕՀՄ-ների իրականացման պայմանների տեսանկյունից՝ կարելի է առանձնացնել՝

1) հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը.

2) հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը. (...)»:

Միևնույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «*Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի»:*

ՕՀԳ օրենքի իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ՕՀԳ-ի առանցքային նպատակը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը հակահրավական ոտնձգություններից պաշտպանելն է, ինչն օրենսդիրն ՕՀԳ-ն սահմանելիս դիտարկել է որպես դրա բաղադրատարր՝ դրանով իսկ ընդգծելով վերջինիս կարևորությունը: Ինչ վերաբերում է ՕՀԳ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նպատակներին, ապա պետք է նշել, որ դրանք, ի տարբերություն 3-րդ հոդվածով սահմանված նպատակի, առավել մասնավոր, ճյուղային բնույթ են կրում, որոշակի վերապահումներով՝ կարող են բնութագրվել նաև որպես խնդիրներ՝ նկատի ունենալով նաև ՕՀԳ իրականացնող մարմինների առջև դրված խնդիրների սահմանման բացակայությունն ՕՀԳ օրենքում: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ թեև մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ ՕՀԳ օրենսդրությամբ անհրաժեշտ է սահմանել նաև ՕՀԳ իրականացնող մարմինների առջև դրված խնդիրները[1], այնուամենայնիվ կարծում ենք, որ ՕՀԳ իրականացնող մարմինների առջև դրվող խնդիրները հարկ է դիտարկել վերջիններից գործու-

[1] Այդ մասին մանրամասն տես Նալբանդյան Ռ., Քինակցյան Ա. Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության զարգացման որոշ հեռանկարների մասին// Գիտագործնական վերլուծություն, Երևան, 2020, էջեր 24-32:

նեությունը կարգավորող ճյուղային օրենսդրության իրավակարգավորումների համատեքստում:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ ՕՀԳ-ն իրավապահ մարմինների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում իրականացվող պետական գործունեության ինքնուրույն տեսակ է, որը նպատակ է հետապնդում բացահայտել, կանխել և խափանել հանցագործությունները, ինչպես նաև հայտնաբերել հանցագործությունը կատարող և կատարած անձանց: Այլ կերպ՝ ՕՀԳ-ի շրջանակում ձեռնարկվող միջոցառումները, ընդհանուր առմամբ հետապնդելով հանցագործությունների բացահայտման նպատակ, օժանդակում են քրեական վարույթ իրականացնող մարմինների առջև դրված խնդիրների լուծմանը և քրեական հետապնդման արդյունավետության բարձրացմանը

Այս կապակցությամբ ուշագրավ է ***Գոռ Իշխանի Սարգսյանի վերաբերյալ գործով*** ՀՀ վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) արձանագրումն առ այն, որ *օպերատիվ-հետախուզական գործունեությունն առանձնանում է իր հետախուզական-որոնողական բնույթով: Մասնավորապես, օպերատիվ-հետախուզական միջոցառումների ձեռնարկումը նպատակաուղղված է ենթադրյալ հանցանքների, դրանք ենթադրաբար նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերմանն ու պարզմանը, այդ կապակցությամբ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրմանը: Այսինքն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրենց հետախուզական-որոնողական բնույթով միտված են նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործության դեպքերի և դրանք կատարող անձանց հնարավորինս արագ բացահայտմանը, որին անմիջապես հաջորդում է ստացված տվյալների ամրագրումը քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված գործողությունների կատարմամբ: Այսպես, <u>հետաքննության փուլում</u>* (ընդգծումը՝ հեղինակներինն է) *օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմամբ ապահովվում է «տաք հետքերով» հանցագործության քննությունը, իսկ <u>նախաքննության ընթացքում</u>* (ընդգծումը՝ հեղինակներինն է)*այն նաև օժանդակում է քննիչի դատավարական գործունեությանը, երբ քրեադատավարական գործիքակազմը բավարար չէ քրեական հետապնդման խնդիրների արդյունավետ իրացման համար, և հանցավորության դեմ պայքարի հանրային շահը պահանջում է նաև գործի համար նշանակություն ունեցող առանձին հանգամանքների բացահայտման համար օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդների և միջոցների կիրառում*[2]:

Կարևորելով Վճռաբեկ դատարանի արձանագրումն ՕՀԳ-ի բովանդակային դիտարկման տեսանկյունից՝ այդուհանդերձ, հարկ է նկատել, որ ՕՀՄ-ներ կարող են իրականացվել նախքան հետաքննության կամ նախաքննության փուլը՝ ՕՀԳ օրենքով նախատեսված կարգով ՕՀԳ մարմինների առջև դրված խնդիրների լուծման նպատակներով: Ընդ որում, հատկանշական է, որ ոչ բոլոր դեպ-

[2] Տե՛ս Վճռաբեկ դատարանի Գոռ Իշխանի Սարգսյանի վերաբերյալ գործով 2019 թվականի ապրիլի 11-ի ԵԿԴ/0229/01/16 որոշման 17.1-րդ կետը:

քերում են, որ ՕՀԳ-ի նշված փուլին կարող են հաջորդել քրեադատավարական մյուս փուլերը՝ նկատի ունենալով յուրաքանչյուր դեպքում նախապատրաստվող կամ կատարվող հանցագործության խափանման, կանխման կամ նախականխման, ինչպես նաև դրանք կատարող անձանց հայտնաբերման, ինչպես նաև այդ փուլում որոշակի խնդիրների լուծման հնարավորությունը:

Հետևաբար, ՕՀՄ-ների իրականացման իրավաչափության մասին դատողություններ անելիս՝ հարկ է նկատի ունենալ ոչ միայն հետաքննության կամ նախաքննության փուլում, այլև դրանց նախորդող՝ ՕՀԳ-ի իրականացման փուլում վերջիններիս կատարման հնարավորության փաստը:

Խնդրո առարկայի հետ կապված՝ կարևոր է բացահայտել ՕՀԳ օրենքում օգտագործվող որոշ եզրույթներ, որոնք, մասնավորապես, բնորոշում են ՕՀԳ-ի էությունը, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ՕՀԳ իրականացնող մարմինների հիմնական առաքելությունը:

Այսպես, ըստ բանասիրական իմաստի՝ ***«բացահայտում»***[3] ասելով՝ հասկացվում է ի հայտ բերել, բաց անել, երևան հանել, ***«կանխում»***[4]՝ նախօրոք ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վերացնել սպառնալիքը, որևէ բանի իրագործելուն խանգարել, առաջն առնել, արգելակել, իսկ ***«խափանում»***[5]՝ որևէ միջոցառման նախապատրաստությունը կամ ընթացքը խանգարել, արգելել:

ՕԳՀ օրենքում ՕՀԳ-ի նպատակը սահմանող հիմնական եզրույթների համակարգային վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ՕՀԳ-ի իրականացման առաջնահերթություններն ամբողջովին նպատակաուղղված են տարբեր եղանակներով հնարավոր հանցավոր արարքների կատարումը բացառելուն կամ նախապատրաստվող և/կամ արդեն կատարման փուլում գտնվող արարքներն ավարտին հասցնելը խոչընդոտելուն, ինչպես նաև հանցավոր գործունեության մեջ ներգրավված անձանց բացահայտելուն:

Վերոգրյալը պայմանավորում է ՕՀԳ-ի յուրահատուկ բնույթը, որն անկյունաքարային նշանակություն ունի հատկապես դատական վերահսկողության շրջանակում ՕՀԳ-ի իրականացման հիմքերի, արդյունքների օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման ընթացքում հանրային ու մասնավոր շահերի հավասարակշռման համատեքստում:

Ակնհայտ է, որ որոշ ՕՀՄ-ների իրականացման դեպքում միջամտություն է տեղի ունենում մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին, ուստի նույնիսկ որոշակի ՕՀՄ-ի ընտրության հարցի լուծման, ինչպես նաև դրա իրականացման ողջ ընթացքում հարկավոր է նկատի ունենալ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ պետության կողմից ստանձնած պարտավորությունները՝ մշտապես պահպանելով հանրային շահի և անհատի շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռությունը: Մասնավորա-

[3] Տես *Աղայան Է. Բ.*, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, էջ 182:
[4] Տես նույն աշխատությունը, էջ 688:
[5] Տես նույն աշխատությունը, էջ 572:

պես, ինչպես ընդգծում է Վճռաբեկ դատարանը ***Գոռ Իշխանի Սարգսյանի*** վերը վկայակոչված գործով, ՕՀԳ-ի բնույթից ելնելով՝ իրավասու մարմիններն առաջադրված խնդիրները լուծելու նպատակով, համապատասխան միջոցառման տեսակն ընտրելիս և այն իրականացնելիս, անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության դեպքում՝ համաչափության սկզբունքին համահունչ պետք է ապահովեն նաև արդար դատաքննության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու և այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների համարժեք պաշտպանությունը[6]:

Այդ համատեքստում, հարկ է վկայակոչել Եվրոպական դատարանի դիրքորոշումներն առ այն, որ «*երբ (...) հավասարակշռության էր բերվում մի կողմից՝ գաղտնի հսկողության միջոցների օգնությամբ անվտանգությունը պաշտպանելու պատասխանող պետության շահը, իսկ մյուս կողմից՝ դիմումատուի անձնական կյանքը հարգելու իրավունքի իրացման նկատմամբ միջամտության լրջությունը, իրավասու ազգային մարմիններն ունեն սեփական հայեցողության որոշակի լուսանցք պատշաճ այն միջոցների ընտրության հարցում, որոնք կօգտագործվեն ազգային անվտանգության պաշտպանության օրինական նպատակին հասնելու համար: Այդուհանդերձ, (ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի) պետք է գոյություն ունենան չարաշահումներից զերծ պահող բավարար և արդյունավետ երաշխիքներ: Այսպիսով, դատարանը հաշվի է առնում գործի բոլոր հանգամանքները, օրինակ՝ հնարավոր միջոցառումների բնույթը, տարածման տիրույթը և տևողությունը, դրանց կարգադրման համար պահանջվող պատճառները, դրանց թույլատրելու, կատարելու և հսկելու իրավասություն ունեցող մարմինները, ինչպես նաև ներպետական իրավունքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցի տեսակը*»[7]:

Ավելին, Եվրոպական դատարանը նշել է նաև, որ հետապնդվող նպատակների կատարմանն ուղղված միջոցների ընտրությունը սկզբունքորեն ընկնելով պետության սեփական հայեցողության լուսանցքի շրջանակում՝ ունենում է լայն կամ նեղ դրսևորում՝ ելնելով պաշտպանության ենթակա իրավունքի բնույթից: Օրինակ՝ «*հաշվի առնելով անձի ինքնության ինքնորոշման և ֆիզիկական ու բարոյական անձեռնմխելիության համար [Եվրոպական կոնվենցիայի] 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների առանցքային կարևորությունը՝ պետություններին վերապահված սեփական հայեցողության լուսանցքը բնակարանի հարցերում ավելի նեղ է, եթե խոսքը գնում է միայն [Եվրոպական կոնվենցիայի] թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված իրավունքների մասին*»[8]:

---

[6] Ընդ որում, հանրային և մասնավոր շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռության պահպանման անհրաժեշտության մասին ընդգծվում է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 2020 թ. ապրիլի 28-ի ՍԴՈ 1526 որոշման 4.4-րդ կետում ՕՀՄ-ների իրականացման թույլտվության որոշումների բողոքարկման համատեքստում:

[7] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «*Roman Zakharov v. Russia*» գործով 2015 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 47143/06, կետ 232, «*Irfan Guzel v. Turkey*» գործով 2017 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 35285/08, կետ 85:

[8] Տես «*Gladysheva v. Russia*» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2011 թվականի

Այսպես, Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը պաշտպանում է «մասնավոր հաղորդակցության» գաղտնիությունը՝ անկախ հաղորդակցության բովանդակությունից (…) և անկախ դրա ձևից: Դա նշանակում է, որ 8-րդ հոդվածի պաշտպանությունը վերաբերում է բոլոր այն «փոխանակումների» գաղտնիությանը, որոնց միջոցով անհատները հաղորդակցվում են միմյանց հետ: *(«Frerot v. France», 12.06.2007, գանգատ 70204/01, § 53):*

Ազգային դատարանների խնդիրն է վերահսկել և ապահովել, որպեսզի իրավասու մարմինների գործունեությունը չխախտի Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքների նկատմամբ միջամտությունը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ *«դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում (…) անկարգությունների կամ հանցագործությունների կանխման հետ»*: Ուստի միջամտությունը թույլատրած որոշումը պետք է ցույց տա, թե ինչպես են ազգային դատարանները կիրառել 8-րդ հոդվածի 2-րդ մասը:

ՕՀՄ-ների կոնկրետ տեսակն ընտրելիս, ելնելով անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության բնույթից, պետությանը վերապահված հայեցողական տիրույթի տարբերակման գաղափարն արտացոլված է նաև ՕՀԳ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում, որի համաձայն՝ *«[Ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում] օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է»:*

դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 7097/10, կետ 93:

Փաստորեն կարող ենք արձանագրել, որ օրենսդիրը որոշ խումբ ՕՀՄ-ների իրականացման համար նախատեսելով լրացուցիչ չափանիշներ՝ սահմանափակել է դրանք ընտրելու իրավակիրառողի հայեցողության լուսանցքը: Հաշվի առնելով, որ թվարկված ՕՀՄ-ների իրականացմամբ լուրջ միջամտություն է տեղի ունենում անձի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքին՝ օրենսդիրն ամրագրել է, որ այն կարող է իրականացվել բացառապես երբ՝

ա) անձը, որի նկատմամբ պետք է դրանք կիրառվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և

բ) եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

Վերոգրյալից հետևում է, որ վերը նշված ՕՀՄ-ների իրականացման համար անհրաժեշտ նախապայման է օրենսդրի սահմանած երկու հիմնական չափանիշների միաժամանակյա առկայությունը:

Առաջին չափանիշի վերաբերյալ հարկ է նկատել, որ դրա օրենսդրական ձևակերպումը, թերևս, հստակեցման կարիք ունի, հակառակ պարագայում այն տարըմբռնումների տեղիք է տալիս: Ընդ որում, խնդրո առարկայի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ նույնպես տեսակետ կա, որ **«կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարման մեջ»** ձևակերպումը բավականին լայն մեկնաբանության տեղիք տվող ձևակերպում է[9]: Այս կապակցությամբ միանգամայն հարկ է համաձայնել այն կարծիքին, ըստ որի՝ նման ձևակերպումից հնարավոր չէ միանշանակ ենթադրել, որ անձը պետք է ունենա որևէ դատավարական կարգավիճակ, իսկ միգուցե դա պարտադիր չէ՞, իսկ եթե պարտադիր է, ձևակերպումը ենթադրում է միայն կասկածյալի՞ կարգավիճակ, թե՞ նաև մեղադրյալի: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև «**եթե կան հիմնավոր ապացույցներ**» ձևակերպմանը. ի՞նչ չափորոշիչների հիման վրա է որոշվում արդյո՞ք հավաքագրված ապացույցները հիմնավո՞ր են, թե՞ ոչ[10]:

Այնուամենայնիվ, հարկ է փաստել, որ առնվազն երկու հիմնական հասկացություն ճշգրտման կարիք ունեն, դրանք են՝ «կասկածվել» ու «ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարում» հասկացությունները: Առաջինի պարագայում կարիք կա ճշգրտելու կասկածանքի բովանդակությունը, սահմանները, ինչպես նաև դրա շեմը՝ հիմնավոր կասկած հասկացության տեսանկյունից: Խնդիրն առավել կարևորվում է, երբ նշված ՕՀՄ-ներն իրականացվում են դեռևս ՕՀԳ փուլում, նախքան քրեական գործով վարույթ նախաձեռնելը: Տվյալ

[9] Տես *Հակոբյան Գ.*, Հետաքննությունը՝ որպես գործունեության ձև, և դրա դատավարական երաշխիքներն՝ ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի//ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտ. հոդվ. ժողովածու, Եր., ՀՀ իրավ. միություն, 2014, էջ 133:ա

[10] Տես *Սարգսյան Ա.*, Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականցման որոշ հիմնախնդիրներ (Վերլուծություն գաղտնի քննչական գործողությունների կարգավորումների լույսի ներքո)// Դատական իշխանություն, № 12, Երևան, 2016, էջ 46:

պարագայում ՕՀԳ փուլում, երբ օպերատիվ տվյալներ են ստացվում որևէ անձի կամ անձանց կողմից նշված տեսակի հանցագործությունների նախապատրաստման կամ կատարման մասին, ապա խոսել կասկածվելու մասին հիմնավոր կասկածի տեսանկյունից առնվազն տեղին չէ: Այլ կերպ, մեր կարծիքով, ստացված օպերատիվ տվյալների վրա հիմնված կասկածանքի բովանդակությունը չի կարող հավասարեցվել քրեադատավարական կասկածանքի բովանդակությանը:

Խնդրո առարկա հաջորդ հարցը վերաբերում է միաժամանակ անձին ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարման մեջ կասկածելու փաստին, քանի որ օրենսդրական նմանօրինակ ձևակերպումից բխում է երկու պայմանի միաժամանակյա առկայություն՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի իրավակարգավորումները:

Այս առումով Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արդարացիորեն նշում է, որ ՕՀՄ-ն կարգավորող օրենսդրական ակտը և նորմերը պետք է «բավականաչափ հստակ ձևակերպված լինեն, որպեսզի քաղաքացիներին պատշաճ կերպով ուղղություն տրվի, թե որոնք են այն հանգամանքներն ու պայմանները, որոնց դեպքում և որոնց ներքո հանրային մարմիններն իրավունք ունեն դիմելու գաղտնի և իրենց անձնական կյանքի ու նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքին պոտենցիալ վտանգավոր միջամտող միջոցների»[11]: Միաժամանակ Եվրոպական դատարանը «Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռի[12] 123-րդ կետում վերահաստատում է, որ ՕՀՄ նպատակներից բխող հաղորդակցության վերահսկման առանձնահատուկ համատեքստում՝ կանխատեսելիության պահանջը չի կարող նշանակել այն, որ որևէ անհատ պետք է հնարավորություն ունենա կանխատեսելու, թե երբ են իշխանությունները վերահսկելու իր հաղորդակցությունը, որպեսզի նա կարողանա համապատասխանեցնել իր վարքագիծը: Բացի դրանից՝ նույն գործով վճռի 125-րդ կետում Եվրոպական դատարանն ընդգծել է. «*Դատարանը գաղտնի հսկողական միջոցառումների վերաբերյալ իր նախադեպային իրավունքում կատարելագործել է հետևյալ նվազագույն երաշխիքները, որոնք պետք է սահմանված լինեն օրենքում՝ բացառելու համար իշխանության չարաշահումը. այն հանցագործությունների բնույթը, որոնք կարող են հիմք ծառայել միջամտության թույլտվություն ստանալու համար,* ***անձանց կատեգորիաների հստակեցումը, ում հեռախոսային խոսակցությունը կարող է վերահսկվել***...»[13]:

Այս առումով առավել ընդունելի կարելի է համարել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի իրավակարգավորումը, որն առավել հստակ է՝ *«սույն օրենսգրքի 248-րդ հոդվածի 1-4-րդ կետերով նախատեսված գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել՝*

[11] Տես Malone v. United Kingdom, 1984 թվականի օգոստոսի 2-ի վճիռ, գանգատ թիվ 8691/79, կետ 62:
[12] Տես Sefilyan v. Armenia, 2013 թվականի հունվարի 2-ի վճիռ, գանգատ թիվ 22491/08:
[13] Տես նաև Association for Evropean Intergration and Human Rights and Ekimdziev v. Bulgaria, 2007 թվականի հունիսի 28-ի վճիռ, գանգատ թիվ 62540/00, կետ 76, Liberty and Others v. United Kingdom, 2008 թվականի հուլիսի 1-ի վճիռ, գանգատ թիվ 58243/00, կետ 95:

1) այն անձի նկատմամբ, ում վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր.

2) մեղադրյալի նկատմամբ.

3) այն անձի նկատմամբ, ում վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ նա պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել մեղադրյալի հետ.

4) այն իրավաբանական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կարող է կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել [կասկածվող անձի կամ մեղադրյալի] կողմից»:

Մասնագիտական գրականության մեջ պնդում կա, որ սույն կարգավորումը համապատասխանում է Եվրոպական դատարանի կողմից սահմանված «օրենքի որակ» եզրույթի չափանիշներին, քանի որ այն սահմանում է այն անձանց խմբերը, որոնց նկատմամբ կարելի է կիրառել գաղտնի վերահսկում[14]:

Ինչ վերաբերում է հանցագործությունների շարքին, ապա այս կապակցությամբ Եվրոպական դատարանի ձևավորած կայուն նախադեպային պրակտիկան վկայում է, որ գաղտնի բնույթի վերահսկողական միջոցառումներ իրականացնելիս իշխանության չարաշահումը բացառելու համար որպես նվազագույն երաշխիք պետք է ապահովվի, ի թիվս այլնի, օրենքում այն հանցագործությունների բնույթը հստակ սահմանելը, որոնք կարող են հիմք ծառայել միջամտության թույլտվություն ստանալու համար[15]:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է նաև ընդգծել, որ հանցագործությունների քանակական կամ որակական ցանկի հստակ սահմանման տեսանկյունից վերջինիս և՛ նեղ, և՛ լայն սահմանումը գործնականում կարող է բացասական հետևանքների հանգեցնել: Եթե առաջին դեպքում մենք կարող ենք ունենալ գործնականում գրեթե չբացահայտվող հանցագործությունների ստվար զանգված, ապա երկրորդ դեպքում գաղտնի բնույթի վերահսկողական միջոցառումները կվերածվեն «հասարակ» քննչական գործողությունների[16]:

Խնդրո առարկայի վերաբերյալ հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները սովորաբար կիրառում են երկու մոտեցում՝

1) կատալոգի սկզբունքը, ըստ որի՝ օրենսդրական կարգավորման են ենթարկված այն հանցագործությունների սպառիչ ցանկը, որոնց առկայությամբ

[14] Տես *Սարգսյան Ա.,* Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականցման որոշ հիմնախնդիրներ (Վերլուծություն գաղտնի քննչական գործողությունների կարգավորումների լույսի ներքո)// Դատական իշխանություն, № 12, Երևան, 2016, էջ 47:

[15] Հղումն ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2015 թվականի փետրվարի 27-ի ՇԴ2/0004/01/14 գործով որոշման 16-րդ կետի (*տես, օրինակ* , «Sefilyan v. Armenia», հունվարի 2-ի վճիռ, գանգատ թիվ 22491/08, կետ 125, Association for European Integrationand Human Rights and Ekimdzhiev v. Bulgaria, 2007 թվականի հունիսի 28-ի վճիռ, գանգատ թիվ 62540/00, կետ 76, «Liberty and Others v. the United Kingdom», 2008 թվականի հուլիսի 1-ի վճիռ, գանգատ թիվ 58243/00, կետ 95 և այլն):

[16] Տես *Սարգսյան Ա.,* Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականցման որոշ հիմնախնդիրներ (Վերլուծություն գաղտնի քննչական գործողությունների կարգավորումների լույսի ներքո)// Դատական իշխանություն, № 12, Երևան, 2016, էջ 47:

թույլատրվում է կիրառել [օպերատիվ-հետախուզական գործունեություն],

2) [օպերատիվ-հետախուզական գործունեության] կիրառության չափանիշը տվյալ հանցանքի համար նախատեսված պատժատեսակ է[17]:

Թեև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել ծանր կամ առանձնապես ծանր, ինչպես նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթներով, այնուամենայնիվ, նկատի ունենալով վերջին խմբի հանցագործությունների քրեաիրավական բազմաշերտ բնութագրերն ու ձևակերպումները, օրենսդիրը միանգամայն արդարացիորեն 253-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել է, որ «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները սույն օրենսգրքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 218-220-րդ, 258-րդ, 272-276-րդ, 435-440-րդ, 477-րդ, 496-րդ և 497-րդ հոդվածներով սահմանված իմաստով՝ դրանով իսկ բացառելով հետագայում դատական պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանությունների հնարավորությունը:

Ինչ վերաբերում է մեր կողմից արդեն նշված որոշակի ՕՀՄ-ների իրականացման համար անհրաժեշտ երկրորդ չափանիշին, ապա պետք է նշել, որ դրա ամրագրմամբ օրենսդիրը «*inter alia*» սահմանել է, որ նշված միջոցառումը կարող է իրականացվել միայն որպես ծայրահեղ (վերջին) միջոց *(last resort),* երբ այլընտրանքային եղանակով անհնարին է առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը: Այսինքն՝ նշված միջոցառումը ոչ միայն պետք է իրականացվի դրա բնույթին և նպատակային նշանակությանը համապատասխան, այլև այն դեպքում, երբ բացակայում են անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակով նույն տեղեկությունների ձեռքբերման այլ միջոցներ, այդ թվում՝ քրեական գործով վարույթի շրջանակում քրեական դատավարության օրենսգրքով կոնկրետ տեղեկությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցները:

Ինչպես արդեն նշել ենք, ՕՀԳ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով նախատեսված որոշակի ՕՀՄ-ներ կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով ՕՀՄ-ն իրականացնող մարմնի կողմից նույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

Բանն այն է, որ օրենքի նման ձևակերպումը որոշակի հակասությունների մեջ է նույն օրենքի այլ դրույթների հետ, մասնավորապես, նախևառաջ, նույն օրենքով որևէ նորմով սահմանված չեն ՕՀԳ իրականացնող մարմինների վրա դրվող խնդիրները, այլև, ինչպես արդեն նշել ենք, ՕՀԳ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված են միայն ՕՀԳ-ի իրականացման նպատակները: Բացի դրանից, ինչպես արդեն վկայակոչել ենք, նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *օպե-*

[17] Ավելի մանրամասն տես *Սահակյան Լ., Ղազարյան Ա., Սաֆարյան Տ., Վարոսյան Ե.*, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի համեմատական վերլուծությունը ԵԽ սկզբունքների և չափանիշների հետ», Երևան, էջ 12-13:

ռատիվ-հետախուզական գործունեությունը բնութագրվում է որպես օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացում: Դա նշանակում է, որ ՕՀԳ օրենքի իմաստով՝ ՕՀԳ-ն իրականացվում է միայն ՕՀՄ-ների միջոցով և հետևաբար օրենքի կարգավորման տիրույթում գտնվում են միայն ՕՀՄ-ները, մինչդեռ օրենքով ՕՀԳ մարմինների գործունեության այլ եղանակներ սահմանված չեն: Ուստի, իրավանորմի նման ձևակերպումից պարզ չէ, թե ինչ եղանակների մասին է խոսքը, որոնք նպատակաուղղված են ՕՀԳ-ի խնդիրների լուծմանը: Ինչ վերաբերում է ՕՀՄ-ների իրականացման եղանակներին, ապա ընդհանուր ձևակերպմամբ՝ դրանք ՕՀԳ իրականացնող մարմինների աշխատանքի կազմակերպման մեթոդների ու ձևերի ամբողջությունն են, որոնք որպես կանոն նախատեսված են համապատասխան գերատեսչական ակտերով:

Հետևաբար, մեր կարծիքով, տվյալ դեպքում խոսք կարող է գնալ միայն ՕՀԳ օրենքով նախատեսված որոշակի ՕՀՄ-ի կամ ՕՀՄ-ների մասին, որոնց իրականացումը, օպերատիվ իրադրությունից կամ հանցավոր գործունեության բնույթից ելնելով, ՕՀԳ իրականացնող մարմնի գնահատմամբ արդյունավետ չի կարող լինել և իր առջև դրված խնդիրները հնարավոր չի լինի լուծել:

Այս տեսանկյունից, թերևս, առավել ընդունելի է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 242-րդ հոդվածի ձևակերպումը, ըստ որի՝ գաղտնի քննչական կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրա արդյունքով կարող է ձեռք բերվել տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց, և միաժամանակ այլ եղանակով այդ ապացույցի ձեռքբերումը ***ողջամտորեն*** անհնար է:

Նմանօրինակ ձևակերպումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական ստուգման ընթացակարգերի համար հստակեցնում է գաղտնի քննչական գործողությունն իրականացնող մարմնի հայեցողական կամ ընտրողական գործառույթի շրջանակը, ինչը գտնում ենք՝ կիրառելի է նաև ՕՀՄ-ների իրականացման պարագայում:

Եվ վերջապես, հարկ է փաստել, որ ՕՀԳ-ի իրականացման փուլում դեռևս վաղ է խոսել քրեադատավարական ապացույցների մասին, ուստի հնարավոր տարընմբռնումներից ու մեկնաբանություններից խուսափելու նպատակով անհրաժեշտ է ՕՀԳ օրենքի քննարկվող իրավանորմում «ապացույցներ» հասկացության փոխարեն օգտագործել «փաստական տվյալներ» հասկացությունը:

Այսպիսով, ամփոփելով՝ կարծում ենք, որ ՕՀԳ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը նպատակահարմար է վերաձևակերպել հետևյալ կերպ. ***«Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է իրականացնել միայն այն դեպքերում, երբ անձը, որի նկատմամբ պետք է դրանք իրականացվեն, կասկածվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր փաստական տվյալներ, որ սույն օրենքով նախատեսված այլ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացմամբ***

օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված նպատակների և/կամ խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը ողջամտորեն անհնար է»:

Annotation. The Article is dedicated to the most important issues of Criminal procedure law and the theory Intelligence and Tracking, which nowadays are undoubtedly urgent in the realm of judicial practice of Republic of Armenia. The authors by implementation of scientific methodology have analyzed and combined the acting legal regulations and new criminal procedure legal norms, and thus they have presented concrete recommendations for the further development of Intelligence and Tracking legislation.

It's notable that the points of view, represented in the Article, have been substantiated by logical paradigm of legal points of view, reflected in case law of European Court of Human Rights, as well as of Court of Cassation of Republic of Armenia. By the way aims and issues of Intelligence and Tracking, common and special terms of their legality have been analyzed, as well as authorial approaches about terms and criterias for special Intelligence and Tracking have been represented.

By the conclusion of the authors in the realm of adoption of new criminal procedure legislation of Republic of Armenia, in current conditions of development of criminal justice the review of Intelligence and Tracking legislation is matter of time.

Аннотация. Статья посвящена важнейшим задачам уголовного процессуалного права и теории оперативно-розыскной деятельности, которые на данный момент однозначно актуальны в судебной практике Республики Армения. Авторы посредством применения научной методологии проанализировали и сопоставили действующие законодательные правовые регулирования с нормами нового уголовно-процессуального законодательства и в этом контексте представили конкретные предложения для дальнейшего усовершенствования законодательства оперативно-розыскной деятельности. Примечательно, что представленные в статье точки зрения обоснованы логической парадигмой правовых точек зрений и правовых подходов, выраженных в судебной практике Европейского суда, а также Кассационного суда Республики Армении. При этом проанализированы цели и задачи оперативно-розыскной деятельности, общие и специальные условия их правомерности, а также представлены авторские подходы относительно условий и критерий, предъявляемых к отдельным оперативно-розыскным мероприятиям.

По результатам исследования, авторы пришли к выводу, что в настоящих условиях развития судебной политики в области принятия нового уголовно-процессуального законодательства Республики Армении пересмотр законодательства оперативно-розыскной деятельности – дело времени.

Բանալի բառեր - *դատական վերահսկողություն, մինչդատական վարույթ, օպերատիվ-հետախուզական գործունեություն, օպերատիվ-հետախուզական միջոցառում, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմին, օրենք, քրեական դատավարության օրենսգիրք, նախադեպային պրակտիկա, իրավական դիրքորոշում, օրենսդրական փոփոխություն:*

Key words: *judicial supervision, pre-trial stage, operative intelligence and tracking activity, operative intelligence and tracking measure, operative intelligence and tracking enforcement bodies, law, criminal procedure code, case-law, legal approaches, legal amendments.*

Ключевые слова: *судебный контроль, досудебное производство, оперативно-розыскная деятельность, оперативно-розыскное мероприятие, органы осуществляющие оперативно-розыскную деятельность, закон, уголовно-процессуальный кодекс, прецедентная практика, правовая позиция, законодательные поправки.*

Վ. Ենգիբարյան - Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, էլ. հասցե՝ vahe777@yahoo.com:

Ա. Սիմոնյան - ՀՀ ԱԱԾ տնօրենի տեղակալ, գնդապետ, ՀՀ կառավարման ակադեմիայի հայցորդ, էլ. հասցե՝ simonyan21@gmail.com

Ներկայացվել է խմբագրության 30.08.2021 թ., տրվել է գրախոսության 30.08.2021 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Դիլբանդյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.09.2021 թ.: